

Նոյնիսկ 1673ի Ֆրանսական եւ Թրքական դաշնագրէն յետոյ, խաչակրութեան ծրագիրը միշտ վառ կը մնար: Գիտուն, իմաստասէր Լայբնից ընդարձակ գրութիւններ կ'ուղարկէր Լուդովիկոս ԺԴ-ին, եւ կը ջանար զինք համոզել՝ թէ Նախախնամութեան կողմէ Ֆրանսայի վիճակուած է առաջնորդել քրիստոնեայ զօրքերն Արեւելքի մէջ: 1675ին Միշէլ Ֆեպլըր կամ Վեղարաւոր Հ. Յուստինիանոս գրութեամբ մը կը փաստէր՝ թէ Թուրքիան նուաճելու համար, հարկ էր որ Եւրոպայի քրիստոնեայ ազգերը միասնաբար գործէին (2):

Այդ ձերբապատումին պայմաններէն մին էր հերձուածող եկեղեցիներու դարձը դէպի կաթողիկէութիւն:

Լուդովիկոս ԺԴ. նկատի կ'առնէր այս առաջարկները, եւ գործակալներ կը ղրկէր Արեւելք, որպէսզի իրեն իմացնեն՝ թէ ի՞նչպէս կարելի է իրագործել Օսմանեան կայսրութեան նուաճումը եւ քրիստոնեաներու ազատագրումը (3):

Ի տես ազատագրական այս ծրագրին հայերը կը համոզուէին՝ թէ հասած է իրագործման ժամանակը Ներսէս Պարթևի վերագրուած կանխասացութեան, ըստ որում,

---

1946 էջ 341: Խորէն Գաբրիկեան, «Ազդարար», Ժ. Տարի, քիւ 494, Թուրքիոյ բարեկամները, էջ 9:

(2) Լեո, Անդ 341-342:

(3) Լեո, Անդ, 342-343: